Հայկ Խանջյան

# ԱՐՑԱԽԻ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԸ

## ՈՐՊԵՍ ՆԱԽԱԲԱՆ

Հայկական տեղանունը հայ ժողովրդի պատմության, նրա կենսագրության մի մասն է: Մեր տեղանուններից շատերն իրենց մեջ պահպանում են պատմական այնպիսի թանկ գանձեր, որոնց մասին լռում են նույնիսկ հազարամյա մագաղաթները:

Արցախ-Ղարաբաղը կարելի է անվանել հայկական այն երկրամասը, որի դեմքը օտար իշխողները քիչ են եղծել: Արցախական տեղանուններն ընդգրկում են հայ ժողովրդի անցած ճանապարհի բոլոր շրջափուլերը: Այսպես, Տրտու (Թարթառ) գետանունը հինգ հազար տարեկան է: Տրտուի մեջ կա հեթանոս հայոց դպրության աստված Տիրի անունը (Տիր տուր, Տիրտուր, Տրտու): Առնըվազն 4 հազար տարեկան է Հաթերք գյուղանունը:

Արցախի տեղանուններն ստեղծվել են տեղանվանակերտության նույն սկզբունքներով, ինչ Հայաստանի մյուս 14 նահանգներում եւ կազմում են հայկական տեղանունների ընդհա-

նուր շղթայի հարազատ ու անբաժանելի մասը: Ավելին, առանձին դեպքերում հայկական տեղանունները «գիրկընդխառնված են»: Այսպես, Մեծ Հայքի Սյունիք նահանգում եղել է Հաբանդ անունով գավառ (այժմյան Հայաստանի Հանրապետության Գորիսի շրջանի տարածքը), Արցախ նահանգում՝ Մյուս Հաբանդ (այժմյան ԼՂԻՄ Հադրութի եւ Մարտունու շրջանների տարածքը) գավառ: Հասկանալի է, որ Արցախի գավառը Մյուս Հաբանդ է կոչվել Սյունիքի Հաբանդից տարբերելու համար: Միաժամանակ մեր հները դրանով հավաստել են, որ այդ երկու գավառները նույն տան մասերն են կազմում: Չէր կարող պատահել, որ Հայաստանից դուրս գտնվող գավառը կոչվեր Մյուս Հաբանդ: *Մյուս*-ն այստեղ Հայաստանի գավառներն իրար կապող, նրանց հարազատությունը խորհրդանշող ձեւույթ է: Սյունիքի եւ Արցախի Հաբանդները միակ օրինակը չեն հայոց պատմության մեջ: Մեծ Հայքի Մոկք նահանգում եղել է 8 գավառ, որոնցից առաջինը կոչվել է Իշայր, երկրորդը՝ Մյուս Իշայր: Հայկական տեղանվանակերտական այս *մյուս* բաղադրիչը նույնն է, ինչ անձնանունների մեջ Ավագը: Նույն ծնողների զավակ երկու տղաներից մեկը կարող է կոչվել Տիգրան, մյուսը՝ Ավագ Տիգրան:

Արցախ-Ղարաբաղը հայոց հնագույն բառերի պահոց-բնական թանգարան է: Հայերենի **կուճ** (մարմար) բառը պահել է Արցախի Կարմրակուճ գյուղանունը, կոհակ (բարձրություն իմաստով) **բառը**՝ Արցախի Կոհակ բլուրը:

Հայտնի է, որ բուսական ծագում ունեցող հայկական տեղանունները կազմվում են *ուտ* վերջածանցով (բացառությամբ Արջուտ եւ Սալուտ տեղանունների): Այս օրինաչափությունն Արցախում իր տարբերակն ունի: Արցախի բարբառում **ու** հնչյունը հաճախ **դառնում է օ (ո)**: Այսպես, ***ուտում եմ*** բառը Արցախի բարբառում դառնում է *օտում ըմ*, *ուղտը*՝ *օղտ*, *ուրախը*՝ *օրախ*, *կուտը*՝ *կոտ*, *թութը*՝ *թոթ*, *սուտը*՝ *սոտ* եւ այլն: Այդ պատճառով էլ բուսական ծագում ունեցող որոշ տեղանուններ վերջանում են *ոտ* վերջածանցով: Այդ օրինաչափությանն են ենթարկվել արցախական հետեւյալ տեղանունները. *Կոճողոտ*, *Թըխկոտ*, *Հունոտ*, *Թթոտ* եւ այլն:

Արցախական տեղանունների մեջ մեծ շերտ են կազմում *խաչ* եւ *տափ* ձեւույթները (մոտ 1000 անուն):

1988 թվականին սկսված Ղարաբաղյան շարժումը իր ազդեցությունը թողեց նաեւ արցախական տեղանունների վրա: Մարզում սկսվեց մի հախուռն շարժում, որի նպատակն է հայկական բնակավայրերը ձերբազատել օտարաշունչ եւ նվաստացուցիչ կեղեւից: Անվանափոխվեցին մի քանի տասնյակ գյուղանուններ: Պետք է ասել, սակայն, որ դրանց մեծ մասը եղել է անտեղի, կամայական փոփոխություն: Օտար անունները պիտի փոխարինել ոչ թե մտացածին, գեղեցկահունչ, արհեստական, պճնազարդ անուններով, այլ գտնել տվյալ վայրի բուն հայկական արցախական անունը, որով երկրամասը հարազատ կմնա իր պատմությանը, իր արմատներին: Այսպես, Ասկերանի շրջանի Դաշբուլաղ գյուղը 1988-ին վերանվանվեց Արցախաշեն: Դա սխալ անվանափոխություն է: Արցախաշեն կարելի է կոչել Արցախի բոլոր բնակավայրերը, քանզի բոլորն էլ գտնվում են Արցախում, հետեւապես արցախաշեն են: Բայց Դաշբուլաղն ունի իր պատմական գեղեցիկ անունը՝ *Աստղաշեն*: Ինչու թողնել հարազատը եւ ուսերին առնել շինծուն:

Տեղանունը դյուրությամբ փոփոխել չի կարելի: Փոփոխման կամ վերանվանափոխման ամեն մի դեպք պետք է դնել համաժողովրդական քննարկման, ծանրութեթեւ անել, ինչպես ասում են՝ յոթ անգամ չափել եւ նոր մի անգամ կտրել:

Չի կարելի տեղանունները փոփոխության ենթարկել հրամաններով ու հրահանգներով: Սխալ տեղանվանափոխությունը նույնն է ինչ որ բնության դեմքը եղծելը, ինչ որ բնաշխարհն ապականելը:

Կրկնելու ու նմանակելու սովորությունը հազար-հազար տարի անհարիր է եղել հայ ժողովրդի արարչական ոգուն: Դա վերաբերում է նաեւ տեղանվանակոչությանը: Բայց մեր օրերում անտեսվել են ազգային այդ սկզբունքները: Այսպես, Հայաստանի Հանրապետության Արտաշատի շրջանում մի գյուղ կա Այգեստան անունով: Նույնանուն մի գյուղ էլ եղել է Ադրբեջանական ԽՍՀ Խանլարի շրջանում (ցավոք, հայաթափ է դարձել 1988-ին): Այգեստան անունով թաղամաս կա Երեւանում: Այս երեք Այգեստանները քիչ համարելով արցախեցիները վերջին երկու տարում 3 գյուղ վերանվանել են Այգեստան (մեկը Ասկերանի շրջանում, մյուսը՝ Մարտակերտի շրջանում, երրորդը՝ Հադրութի շրջանում): Այնուամենայնիվ, մեր պատմական հիշողության մեջ ավելի ամուր է նստած յոթերորդ (իրականում ամենաառաջին) Այգեստանը՝ Վան քաղաքի հռչակավոր ավան-թաղամասը: Սա բանի նման չէ, ինչ կարիք կա միայն Արցախում երեք գյուղ կոչել Այգեստան անունով: Մարդ ինչքան զավակներ էլ ունենա՝ նրանցից յոթին նույն անունը չի տա:

Աշխատությունը կօգնի արցախեցիներին վերագտնելու իրենց մոռացության տրված բնիկ հայկական տեղանունները:

Այս աշխատության շուրջ 1000 բառահոդվածներում ընդգրկված է ավելի քան 20 հազար տեղանուն. արցախական քաղաքների, ավանների, գյուղերի, գյուղատեղիների, հնավայրերի, գետերի, լճերի, աղբյուրների, կիրճերի, անտառների, հանդամասերի, քարանձավների հին ու նոր անվանումները, նրանց մի մասի ստուգաբանությունները, այդ վայրերի հետ կապված նշանավոր անցքերը, ժողովրդական զրույցներն ու լեգենդները, արցախեցի երեւելի անձինք:

Արցախի տեղանունների՝ ամենաթարմ տվյալներով օժտած հանրագիտական այս բառարանը գործնական մի ձեռնարկ է բոլոր նրանց համար, ովքեր զբաղվում կամ հետաքրքրվում են Արցախի ճակատագրով:

Հայկ
ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ
ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԸ

